

ԱՐՏԱՌԱՋԻ

Մի՛ խոռովիր, սիրեցեալդ իմ Հելենէ, փարատէ՛ կասկածդ... Դէ, կը տեսնեմ որ արդէն աշօղ արտառնալով կը լինան... Բայց ճնթաղաբութիւն մ'էր երկիրդ... հանդարտէ... կարեոր գործ մը զիս այժմ հօրս քովը կը կանչէ. թո՛ղ տուր սիրեցեալդ իմ Հելենէ, որ առ այժմ մեկնեմ աստի Սուրբ գետնէն առնելով շտապաւ դուրս կ'ելլայ)

ՏԵՍԻՒԼ Զ.

ԼԵՆԻՆԷ (առանձին)

Ինչ հրաժեշտ, միթէ խոյս չը՞տար ինձմէ Արտաազդ. ինչ դէպք այդպէս տաղտուկ կ'ընեն իրեն իմ հոս ներկայութիւնս։ Այլ ինչ պաղ երակներուս մէջ թողոց մեկնելուն... Ինչ ցըրտութիւն. հազիւ թէ ինձ աշօ մը ձգեց և զայն մէկէն երկաթիւն վրայ կ'ուղղէր... Ինչ խառն և շփոթ պատասխան, որ փոխանակ զիս հանդարտեցնելու՝ ևս առաւել վրդովեց... միթէ չըտեսայ որ երկաթիւն սիրտն վարսելու կը փութար... թէ որ վայրկեան մ'աւ ուշ հասնէի իւր դիակը պիտի գտնայի... Իսկ ինչ վիշտ՝ ինձ անծանօթ՝ իրեն տաղտկալի կը ցուցնէ կեանքը։ Մինչև հիմայ վիշտ չէի ճանչնար... Դէ, հնազանդ ճիւղ որ երկթէ մագիւններով սիրտս կը փրէ... ահա առաջին անգամն է որ հետո անկեղծ է՛ Արտաազդ... Ինչ դաժան գաղտնիք լեզուն կողպած է այդպէս... խռոված էր, ես ալ խռոված էի. երէկ գիշեր անուրջիս մէջ է՛նմ գիտեր ինչ ահաւոր և դաժանատեսիլ ճիւղաք երևակայութեանս մէջ կը պարէին. մինչև ցոյս արիւն տեսայ, արեան լճի մը մէջ ես ալ հօրս հետ կը լողայի... երբ արթնեցայ, համատարած լուսթեան մէջ լսեցի որ գիշերահաւն մեր տանեաց վրայ դարձած տխուր կը ճուար... կը վազեմ հոս, որպէս զի սիրելոյս ծոցին մէջ գիշերուան զարհուրանքս մոռնամ... Ինչ տեսայ... փունտեղ չըղեգեբիմ հոս, վազեմ իւր ետէն, չ'ըլլայ թէ կրկնէ անձնապաշտութեան փորձը և շահամ իր քրեւնէ խելու գիւնքն յուսահատող գաղտնիքը։ (Երկամ վրայ իյնալով) Մե՛ծ դիճ, խլեցէ՛ք իւր սիրտէն վշտը, ձեռքը մահացու երկաթէ, և մի՛ ընկղմե՛ք դուարթ օրերս յախտեանական սզոյ մէջ։ (Ելելով)

(Շարունակելի)

ՍԵՊՏԻՄԲԵՐԻ ՄԻՆԱՍԵՐԱՆ

ԱՆՆԵՐԵՆՈՅԹ

Անհղաղորդ շանթի հարուածն երբ լըսեմ, Դիլեկափառ կեանքի մը սուզը կու լամ. Ե՛հ, ո՛ր ի՞նչ այդ ժանտափուտը, կ'ըսեմ, Արդեօք լափեց... վայելազեղ մի չու չան... Հ. Գրս. Ա.

ՔԱԶԱՍԻՐՏ ԹԱԳԱՒՈՐԸ

Արտաազդի հաւատադրութեան առաւապելը, մինչև ցարդ ընդունուած է իւր իրականութիւն ամեն հին և նոր, պատմաբաններէն, որոց հիմունքն կը կազմեն Ստրաբոն և Պլուտարքոս։ Սիրիշներուն հետեւելով տոհմային երկու մեծ պատմաբաններն Հ. Մ. Չամչեանն և Հ. Յ. Գաթրընեանն, կուգան նոյն սխալ կարծիքն հիւրասիրելու իրենց գրուածոց մէջ, իրենց յատուկ գունատութեամբ, կարծես աւելի հաւատարի ընելու համար Անտոնիոսի սուտակասպաս պատմիչներու կարկառած ստուերները։ Ընթերցողի աչքի առաջ կը դնենք երկու ընագիրներն, որպէս զի դիւրին լինի դատելու մեր գրածներու ոյժն և ճշմարտութիւնն։

Չամչեան պատմահայրն կը գրէ. «Արտաազդ արքայ Հայոց երկուցեալ յարաշահանաց Անտոնիոսի, հրեշտակութիւնս առաքեաց առ նա, և հաստատեաց ընդ նմա հաշտութիւն խաղաղութեան, խոստացեալ նմա՝ նիզակակից լինել Հոռոմայեցոց։...

Չայս լուեալ Հոգաւորանոսի կայսեր, թէպէտ և հաճեցաւ ընդ հաշտութիւնն բայց քանզի ի ծածուկ թշնամացեալ էր ընդ Անտոնիոսի, զրեաց առ Արտաազդ, մի նպաստել նմա, որպէս է տեսանել առ Դիոֆիլի, (գիրք. Խթ.) — Արտաազդ արքայ գառաջիւնն անդ ոչ կամեալով թշնամութիւն ցուցանել առ Անտոնիոս, իբրեւ կոչեցաւ ի նմանէ յօգնութիւն ընդդէմ Պարսից, եկն առ նա վաղվաղակի հանդերձ վեց հազար հեծելովք և եօթն հազար հետեակօրց և Անտոնիոս ոչ ունելով կասկածանա ինչ զնմանէ, ընտրեաց զնա իւր առաջնորդ ճանապարհի և ինամատար գործոց պատերազմին։ Այլ քանզի չկամաւ Արտաազդ օգնել Անտոնիոսի, հնարս հնարեցաւ, և մեկնեցաւ ի նմանէ հանդերձ զօրօքն, հաւանեցուցեալ զնա անդրէն դարձուցանել զնոսա առ նա »։

Նոյնպէս և Հ. Յ. Գաթրընեանն կը գրէ.

«Արտաւազդ... խօսէր հաշտութիւն ընդ Անտոնեայ՝ խոստացեալ նպաստ ևս լինել յարշաւանին ընդդէմ Պարթևաց. այլ ի ծածուկ ի բանի էր նա ընդ Արշակայ ժեյ. (Փրայատիա Ե.) գրգռեալ և յՈլտաւիա նեայ (որ ոսորին էր Անտոնեայ)։ Մոլորեց-ցոյց Արտաւազդ գճանապարհս Հոռոմայեց-ւոցն շրջեցուցանելով զնոսա՝ մինչև ան-ցին ժամանակ տարւոյն որ պատեհ էին յարշաւանն յայն »։

Իսկ օտար պատմիչներէն միայն Ռուլէնր պիտի յիշենք, որոյ պատմութիւնն ըն-դարձակ հիւսուածք մ'է Յոյն և Հոռոմայեցի պատմիչներուն։ Սա աւելի յառաջ երթա-լով կը գրէ Անտոնիոսի համար թէ. «Տուեալ ողջոյն կլէտպատրայ, ել գնաց ի Հայաս-տան, ուր էր պայմանեալ տեղին ժողովելոյ համագունդ ամենայն զօրաց »։

Արդ այս երեք պատմագիրներն, ոչ մի նոր բան ասած չեն, այլ քայլ առ քայլ հետեւեր են Պլուտարքոսի, որոց ուշադրու-թենէն վրիպեր է իրենց օրինակագրի խօս-քերու բուն միտքը, անոր համար երեա-կայսեր են պարագանքն՝ որոնք կը հակասեն ընագրին, զոր փոքր մի ստորև պիտի անդրադարձնել տանք մեր ընթերցողնե-րուն։

Նախ երկու խօսք ևս, թէ ինչո՞ւ մենք նա-խապատուութիւն կու տանք Պլուտարքոսի և ոչ Ստրաբոնի. պատճառն ըստ մեզ բա-ւական յայտնի է. թէ և երկուքն ժամա-նակակից են և օտուտած պատմաբանի պահանջուած ձերբերով, այնուհանդերձ Ստրաբոնի և Պլուտարքոսի ձեռքնակապիւնն կը տարբերին մեծապէս իւրարմէ։ Մեզ նախընտրելի կը թուի Պլուտարքոս անոր համար որ առաջինը ապրեր է այն ժամա-նակ, երբ իւր կենդանութեան օրով կը դարը-նէին Անտոնիոսի կեղծիքներն, որոց համ-բաւը Փոքր Ասիոյ մէջ կը տարածուէր շատ հեշտութեամբ։ Ստրաբոն Պոլեմոնի ազդե-ցութեան տակ գրեր է, որ չէրմ կուսա-կից էր Անտոնիոսի, և ինչպէս պիտի տես-նանք, իորհրդակից Անտոնիոսի կազմած դաւադրութեանը՝ կայանաւորելու զԱրտա-ւազդ։ Ուստի աւելի բնական չի կրնար

լինել հաւատադրութեանը՝ իրենց «պա-տիւն» փրկելու համար, արատաւորելու իրենց դաշնակից և հաւատարիմ բարե-կամի Հայոց արքայն։ Հետեւապէս Ստրա-բոնի գրածներն շատ վերապահութեամբ պէտք է ընդունել անաչառ քննադատու-թեան մէջ։

Իսկ Պլուտարքոսի աշխարհահռչակ հե-ղինակութիւնն, պէտք չունի մեր ջատա-գովութեան։ Նա գրեթէ ժամանակակից է իւր պատմած դէպքերուն։ Զուգակշիռները գրուած է Հոռոմայեցոյ մը խնդրանօք, որով պէտք էր կասկածիլ որ տիրող իշխանու-թեան հաճոյանալու համար, նա Հոռ-մայեցոյն կողմն պէտք էր բռնած լինել. մինչ ընդ հակառակն, նորա մէջ իմաստա-սիրի մը ճշմարտութեան հաւատարիմ մնա-լու հոգին, գերադաս է քան սոսկական պատմաբանի մը, որ դէպքեր և անցքեր կ'արձանագրէ, առանց իւր նիւթոյն բա-րոյական և հոգեկան յատկութիւններն մատնանշելու. այս մասին Պլուտարքոսի Զուգակշիռներն աւելի են քան լոկ պատ-մութիւն մը, և ըստ արժանւոյն գնահա-տուած՝ հին և նոր բանասէրներէն. ահա առաջին՝ թէ որով Պլուտարքոս կը տա-րբերի Ստրաբոնէն. երկրորդ՝ վաւերագրե-րու ուսումնասիրութեամբ։ Յիրաւի, Ստրա-բոն իբրեւ ժամանակակից հանդիպած դէպ-քերուն, բաւական ուսումնասիրած չէ տի-րող քաղաքական ոգին, որով այն ժամա-նակ Հոռոմի իշխանութիւնն կը գործէր անփնառ պրծնելու երկու վտանգաւոր մը-ցակիցներու ձեռքէն։ Հոկտաւիանոս և Անտոնիոս՝ Սկիւլլայ և Քարիդղի նեղուցէն պիտի անցնէին Հոռմէական Հասարակա-պետութիւնն, մէկն կամ միւսն պիտի կորսուէր յորձանքին մէջ։ Գերակոյտն ինչ-պէս տեսանք, երկու չարիքէն փոքրագոյնը համարեցաւ Հոկտաւիանոսի նաւով անց-նիլ նեղուցն, և չսխալեցաւ։ Ակտիոնի անգութ յաղթողին մէջ՝ տեսաւ ներողամիտ և խաղաղարար Օգոստոսը։

Ստրաբոն ուրեմն ժամանակի ոգւոյն համեմատ գրած չէ պատմութիւնն։ Մինչ-դեռ Քերոֆէնացին, աւելի բարձր քան զԱ-

մասիացիներն, Զուգակշիռներն մատենագրած ժամանակ, նախ երկար ապրեք է Հոռմէական միջնորդին մէջ, որով աւելի ուսումնասիրած է Հոռմէական ՆԱԲԱԿԻՄԻՆ, երկրորդ Պլուտարքոսի տրամադրութեան տակ կը զտնուէին ոչ միայն Ստրաբոնի պատմական և աշխարհագրական երկասիրութիւններն, այլ և Անտոնիոսի և Ոգոստոսի կենսագրականները, Կերակուտի դիւանը, Հասարակական և անհատականաց գրատունները, բանաստեղծական և դիւցազնական գրութիւններ և մանաւանդ դամբանական ճառերը: Սա աւելի լուրջ և մանրամասնօրէն ուսումնասիրած է իւր Նիւթերը. այս մասին ամէն կերպով վստահանալի է, ուստի մեր ներկայ բանակուի մէջ, ինչպէս ըսինք, կ'ուզենք օգտուիլ իբրեւ հարազատ աղբիւրի, ապացուցանելու համար Անտոնիոսի հաւատարմութիւնը և սե դաւաճանութիւնը ընդդէմ իւր դաշնակից, բարեկամ և ԲԱԿԻՄԻՆ արքային Հայոց:

Վերադառնալով մեր յիշած երեք պատմիչներուն, թոյլ կուտանք մեզի գրելու նախ՝ թէ Չամչեան պատմահօր ասածն ընդունելի չէ՝ իբր թէ Արտաւազդ «երկուցեալ յարշաւանաց Անտոնիոսի», հրեշտակութիւն կը դրկէ հաշտութիւն խնդրելու, խոստանալով նիզակակից լինել Հոռմայեցւոց: Վասն զի Անտոնիոս կ'էնպատրային խելքը տուած, ի սկզբան Ասիա չեկաւ, այլ իւր դրկած տեղապահներն յաղթեցին Պարթևաց: Վիշդիտիոսի Սամուսատ պաշարած ժամանակը միայն վրայ կը հասնի Անտոնիոս, որ ոչ միայն չկարողացաւ ո'չ յարձակմամբ և ոչ աւելի յաջող պայմաններով, քան Վիշդիտիոսի զրաճներուն, առնուլ քաղաքը, այլ ստիպուեցաւ ինքն ընդունիլ քաղաքացւոց պայմաններն, և ազատ թողուլ քաղաքն ու հեռանալ: Այդ միջոցին Արտաւազդ, իբրեւ դաշնակից Պարթևաց, աւելի երկիւղալի էր Անտոնիոսի քան ի հակառակին: Եւ որովհետև Անտոնիոս կը խորհէր արշաւել Պարթևաց դէմ, ինքն աւելի պէտք ունէր Արտաւազդի օգնութեան, քան նա Անտոնիոսի. ուստի Անտոնիոսն բնականաբար պիտի ուզէր

հաշտութիւն և խաղաղութիւն կնքել Արտաւազդի հետ, թողլով Արտաւազդին՝ Պոմպէոսի խլած երկիրներն, որուն կրկին Արտաւազդ Պարթևաց օգնութեամբ տիրեք էր: Մեր տկար տեսութեամբ Անտոնիոս Սամուսատի մէջ հրաւիրած է զԱրտաւազդ՝ նորոգելու Մեծիկ Տիգրանի կռած դաշնադրութիւնը Հոռմայեցւոց հետ:

Անտոնիոս Սամուսատի մէջ եթէ Արտաւազդի հետ դաշինք կապած չըլլար, և ուզենար կոխը շարունակել, երկու թշնամի եակակաշեքու պիտի հանդիպէր, Հայոց և Պարթևաց, և կրասոսէն աւելի ամօթապարտ պարտութիւն պիտի կրէր: Մինչդեռ Արտաւազդի բարեկամութիւնը և նիզակակցութիւնը կ'ապահովէր վերջնական յաղթութիւնը Պարթևաց վրայ:

Հասկանալի է նաև, ինչպէս նախընթացպէս ասած ենք, Արտաւազդ՝ երկու թշնամիներու վերջնական յաղթութեան փափաքող չէր, ինչպէս կ'ենթադրեմ, տգործութիւն ունենալու էր նաև Արշաւրի կամ Փրաատի գոռոզ և անգութ բնատուրութենէն. ուստի, հաւանական է, սիրով ընդունած կ'ըլլայ Անտոնիոսի հրաւերն և զաղտնի դաշնադրութիւն մը տեղի ունեցած է Սամուսատի մէջ, Արտաւազդի և Անտոնիոսի միջև: Եւ ճիշդ այդ դաշնադրութեան պայմաններէն մէկն եղած է, պաշտպանողական պատերազմի ժամանակ, օգնութեան հասնիլ Հոռմայեցւոց վրէժ հազար ծիւռերով և եօթը հազար հետևակ զօրքով: Սակայն այդ խոստումն, մնացած է լոկ խոստում մը: Վասն զի Պարթևներն՝ Բակուր արքայորդույ և Բարզափրան Ռշտունույ պարտութենէն յետոյ, իրենց յարձակումն չնորոգեցին Հոռմայեցւոց դէմ: Մինչ յետոյ յարձակողն եղաւ Անտոնիոս, և ըստ դաշնադրութեան, Արտաւազդ պարտք չ'ունէր միջամտելու կողմին, որով անհիմն է Չամչեան պատմահօր գրածն թէ՝ «Անտոնիոս ոչ ունիւով կասկածանաւ ինչ զնմանէ, ընտրեաց զնա իւր առաջնորդ ճանապարհի և խնամատար գործոց պատերազմին» հանդերձ ալովքն:

Հ. Զամչեանի կազմած գաղափարէն աւելի անհաւանական կը թուի Հ. Գաթրճեանին, որ ոչ միայն կ'ընդունի իրը թէ Արտաւազդին յանձնած լինի Անտոնիոս պատերազմի առաջնորդութիւնն, այլ կեղտ մ'աւելի կը դնէ Հայոց արքային վրայ, որպէս թէ Արտաւազդ մոլորեցուցեր է Հոռոմայեցիք ուղիղ ճանապարհէն այնքան ժամանակ, որ արշաւանքի յարմար պատեհէր կորսուեր է:

Անհիմն է այս գաղափարը, անոր համար որ հակադաս է Ռուլէի ասածին, թէ՛ Անտոնիոսն և դաշնակիցք ՊԱՅՄԱՆԱՎԻԴԱՆ էին հաւաքել, գումարել զօրքերը Հայաստանի մէջ, և հաստատուած էր անշուշտ զարնան բացուելուն սկսիլ արշաւանքը Պարթևաց դէմ, այն ճանապարհով և պատեհութեամբ, որով Մեծն Խոսրով տասր տարի Արտաւանի վրէժն հանելու համար գնացած էր, ինչպէս մեզ կը նկարագրէ Ազաթնիզեդոս. ուստի Արտաւազդ որ աշխարհի մէջ մոլորեցուց զՀոռոմայեցիս գրեթէ ութ ամիս, մինչև աշնան վերջերը, Անտոնիոսի ձախող արշաւանքին սկսելու պատեհին:

Առաջին պիտի ասենք, որ հաւանական է թէ Անտոնիոս որոշած լինի հաւաքել զօրքերը Հայաստանի մէջ, բայց նաև պիտի տեսնանք, որ փոխանակ ձմերելու Հայոց աշխարհի մէջ, աշնան վերջերը, կը ձեռնարկէ իւր արշաւանքը, կանխելով ժամադրեալ ժամանակէն գրեթէ վեց ամիս հետեապէս մոլորութեան և պատեհութեան կորսնցնելու պատճառն և հեղինակն Անտոնիոսն է որ ոչ Արտաւազդ, որպէս կը հաւաստէ մեզ Պլուտարքոս: Պատճառը յետոյ կը տեսնենք:

Դարձեալ, Անտոնիոսի արշաւանքի ճանապարհն մեզ յայտնի է. նա կրասոսի շաւղով գնաց, Միջագետքի անապատներէն: Արդ երիտասարդ Արտաւազդն որ ամենայն կերպով կը գգուցանէր զՀոռոմայեցիս այդ վտանգաւոր ուղիէն, կարելի է հաւատալ որ կատարեալ հասակին մէջ՝ ՔԱՅՏԱՆՈՒՄ ԳԻՐ Հոռոմայեցւոյն համար՝ պատերազմի առաջնորդութիւնն ստանձնէր և ամիսներ

հարիւր հազարի բանակն անապատներու մէջ մոլորական թափառեցնէր, ոչխարի հօտերու պէս, առանց երբէք պատահելու գայլերու վոհմակին՝ Պարթևներուն, որք կը դարձանէին աւազուտներուն մէջ, փարատելու հօտն և հովուի գլուխն ցցելու նիզակի ծայրն, հակակշիռ տնկելու կրասոսին ղէմ: Արտաւազդ առաջին անգամ չշարժեցաւ իւր տեղէն՝ պատճառով Պարթևաց սպաննացող արշաւանքն Հայաստանի վրայ: Երկրորդ անգամ ալ շարժած չէ տեղէն. որովհետև արդէն բարեկամ և դաշնակից էր Պարթևաց և ի ձածուկ սերտ յարաբերութեան մէջ էր Հոկտաիանոսի և Հոռոմի ծերակուտի հետ:

ՄԵՂԻՍ ԵՐԵԱՅԱՍ



ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՍՏ Հ. Ե.

(Տես բազմակէպ 1919 էջ 831)

Անկումն բռնաւորական իշխանութեան եգիպտոսի և ելք խորայելի յեգիպտոսէ.

Արիսու ժիժ հարստութիւնը տապալած ժամանակէն ըիշ վերջը՝ կը մտնէր Մովսէս Էգիպտոս. մինչդեռ Հոռոմէս թագաժառանգ՝ որ ապա Հոռոմէս Գ անուանեցաւ, որդի Նեքտտիի (Սիտի Գ), իր կեանքը և թագաւորութիւնը փրկելու համար կը փախչէր Եթովպիա:

Անա երկու ազգաց գլուխներ, որոնք՝ տարբեր տարբեր նպատակներով կը ձեռնարկեն իրենց վերջակէտին հասնելու:

Առաջինը՝ իր ազգը ազատելու համար գերութենէն, կը մտնէր վիշապին որջը ուղղակի անոր հետ կռուելու համար: Երբ մտնէր այն երկիրը, ուր քառասուն տարիներ առաջ, մտած էր իրեններուն ճովը, փորձ փորձած էր ազատելու իր ազգը բռնակալաց ձեռքէն, բայց ուրիշ ճամբով. և այն ժամանակ իրեններն իսկ իրեն համակիր չէին թուեր, և նոյն իսկ իրենց